ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի հուլիսի 1-ին ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/ԷԳՊ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան 18 հուլիսի 2019թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտոր Ռ. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Եսայանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Գնորդի և Վաճառողի 2019 թվականի հուլիսի 18-ին ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/ԷԳՊ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված թվային պրոյեկտոր՝ Panasonic PT-VW540E (7 հատ) ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օր:

1.2 Մատակարարման ժամկետը սահմանել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 6-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան » ՊՈԱԿ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք. Երևան 0025, Խանջյան 50
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Թեքեյան բիզնես կենտրոն»
900018001876	«Ամերիաբանկ» ՓԲԸ
	Հ/Հ 1570005003790100
ՀՎՀՀ 01503224	ՀՎՀՀ 01204713
Ռեկտոր _____ Ռ. Հայրապետյան	Գլխավոր տնօրեն_____ Ռ. Եսայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.